4. Գոյություն ունեցող շենքում լրացուցիչ հարկ (այդ թվում մանսարդ) կառուցելու, կցակառուց կամ այլ բարելավում, վերափոխություն իրականացնելու համար նախագիծ մշակելու առաջադրանք ստանալու հայտին անհրաժեշտ է կցել շենքի կայունության, ամրության և հուսալիության վերաբերյալ մասնագիտական եղակացությունը:

5. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձան հանդիսացող գույքի ծևափոխման նախագիծ մշակելու առաջադրանք ստանալու հայտին կցվում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պետական լիազորված մարմնի համաձայնությունը կամ մասնագիտական եղակացությունը:

6. Իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II կատեգորիայի դասակարգում ունեցող օբյեկտների համար առաջադրանքը տրամադրում է կամ մերժում՝ կառուցապատողի հայտը ընդունման օրվանից 10-օրյա ժամկետում, III կատեգորիայի օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում, իսկ մերժման դեպքում՝ նշում մերժման պատճառները:

7. Կառուցապատողը կարող է համապատասխան փոփոխություններ կատարել մերժված հայտում ու ներկայացվող փաստաթղթերում և կրկին հայտ ներկայացնել իրավասու մարմնին:

8. Իրավասու մարմինը ըննարկում է կրկնակի հայտը և 10 օրվա ընթացքում կառուցապատողին տալիս առաջադրանք:

9. Հայտի մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**III. ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ
ՀԱՄԱՅՆԵՑՈՒՄԸ**

10. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շինարարության թույլտվություն պահանջող բնակելի, հասարակական, արտադրական շենքների ու շինությունների նախագծերը համաձայնեցվում են համայնքի ղեկավարի հետ:

11. Համաձայնեցման ներկայացվող նախագծին կցվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության

իրավաբանական կարգ հասուածեց մասին» թիվ 711-Ն որոշմանը համապատասխան իրավաբանացքած գործադրության օգուածացությունը (բացառությամբ սահմանված դեպքերով և կարգով նախագծողի գուազը երաշխափառացով թուարկելիք նախագծերի):

12. «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, սահմանված դեպքերում կառուցապատողը պարտավոր է ապահովել նախատեսվող գործունեության բնապահպանական պետական փորձաքննության անցկացում, ներկայացնելով համապատասխան եղուակացություն՝ շրջակա բնական միջավայրի վրա ազդեցությունները կանխարգելելու և մեղմացնելու մասին:

13. Համաձայնեցման ներկայացվող նախագծի փաթեթում ներառվուած է շինարարական աշխատանքների կատարման ժամանակացույցը:

14. Նախագծային փաստաթյութերը համաձայնեցվուած են դրանք ներկայացնելու օրվանից՝ 1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ոիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 10-օրյա ժամկետում, 2)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ոիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում:

15. Դիտողություններով վերադարձված նախագծային փաստաթյութերը համաձայնեցվուած են, դրանք կրկին ներկայացվելու օրվանից՝ 1) սույն կարգի 36-րդ կետի 1-ին ենթակետում նշված օբյեկտների մասով՝ եռորյա ժամկետում, 2) սույն կարգի 36-րդ կետի 2-րդ ենթակետում նշված օբյեկտների մասով՝ 7-օրյա ժամկետում:

IV. ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի «Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը հաստատելու մասին» թիվ 896 որոշմամբ:

17. Ոչ հիմնական շինությունների նախագծային փաստաթյութերը մշակվուած են հողամասի տրամադրման մասին որոշման հիման վրա, որով ամրագրվուած են շինությունների տարածական չափերը, հողամասի վրա դրանց տեղադրման պայմանները, ճարտարապետական լուծումներին ներկայացվող պահանջները՝ ենթով տեղանքի և (կամ) օբյեկտի առանձնահատկությունից:

18. Ոչ հիմնական շինությունների տեղադրման թույլտվությունը տայիս է համայնքի դեկավարը՝ նրա կողմից համաձայնեցված և պատվիրատուի կողմից հաստատված նախագծի հիման վրա:

V. ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՍՏ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

19. Շենքերի և շինությունների գործառական նշանակությունը փոխելիս որպես պատվիրատու հանդիսած գայիս տվյալ շինության սեփականատերը կամ համապատասխան լիազորություններով օժտված անձը:

20. Շենքի, շինության կամ դրա մի հատվածի գործառական նշանակության փոփոխումը իրականացվուած է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88 որոշմամբ սահմանված կարգով՝ պատվիրատուի հայտի հիման վրա Գեղաշեն համայնքի դեկավարի կողմից տրված ճարտարապետական պահանջների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, որոնց համար չի պահանջվուած շինարարության թույլտվություն) համաձայն մշակված, համաձայնեցված և հաստատված նախագծով:

VI. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեությունը իրականացնելիս հանդիսած գայիս որպես կառուցապատող՝ կառուցապատողի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը կարգավորվուած է

- ուղարքություն, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ փաստաթուրով:
22. Գեղաշեն համայնքում շինարարություն իրականացնելիս շրջակա միջավայրի անվտանգության, սահմանադրական պաշտպանության, կառուցապատվոր հողերի պահպանության խնդիրներին ապահովելու նպատակով, կառուցապատողը պարտավոր է կատարել հետևյալ կանոնները.
- 1) շինարարության թույլտվության դիմում ներկայացնելիս կառուցապատողը կամ քանդական աշխատանքներ իրականացնողը պարտավոր է ներկայացնել շինարարական աղբյուր համապատասխան աղբավայր տեղափոխելու վերաբերյալ պայմանագիր:
- 2) փողոցներին հարող հողամասերում կառուցապատում իրականացնելիս մայթերը ժամանակավոր սարքավորել անվտանգ հետիւոտ շարժումն ապահովելու համար անհրաժեշտ հարթակներով, բազրիքներով ու ծածկոցներով:
- 3) կառուցապատողը պարտավոր է իրականացնել հողի շերտի հանումը, պահպանումն ու օգտագործումը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1396-Ն որոշման համաձայն:

VII. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹԵՐԵՐ ՄՇԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23. Քաղաքաշինական փաստաթյուր մշակողների և շինարարություն իրականացնողների իրավունքները և պարտականությունները սահմանվում և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական օրենսգրքով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով:
24. Քաղաքաշինական փաստաթյուր մշակողների և շինարարություն իրականացնողների պատասխանատվությունը կարգավորվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և իրավական այլ ակտերով:

VIII. ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԾՐԱԳՐԿՈԴ ՓՈՓՈԽՈՒԹՅՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԹԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

25. Գեղաշեն համայնքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և իրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի ընսարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությունն իրականացվում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-14-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և իրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի ընսարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» թիվ 660 որոշման համաձայն և սույն կարգով:
26. Գեղաշեն համայնքի տարածքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին հասարակայնության իրազեկումը է համայնքի ղեկավարը:
27. Իրազեկումն իրականացվում է.. 1)համայնքային էլեկտրոնային կայք-էջում տեղադրմամբ.
2)հասարակական ընսարկումներով:
28. Քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի իրապարակման ու ցուցադրման ժամկետը սահմանվում է 15 օր:
29. Հասարակայնության ներկայացուցիչները սահմանված ժամկետում նորմատիվ և այլ իրավական ակտերով հիմնավորված դիտողությունները, առաջարկությունները, ինչպես նաև իրապարակված նախագծերի վերաբերյալ սեփական միջոցներով կատարված անկախ փորձաքննության եղակացությունները գրավոր

30. Համայնքի ընթացակարգ հաստակաբայության ներկայացուցիչների (ընտուրքագովածների) և առաջարկությունների հեղինակների) մասնակցությամբ ընտուրքագովածների ու առաջարկությունների ուսումնակիրարությունից և վերլուծությունից հետո 3-օրյա ժամկետում ընդունում է համապատասխան որոշում քաղաքաշինական ծրագիրը (կամ նախագիծը) համաձայնեցնելու, լրամշակման համար վերադարձնելու կամ մորթերու մասին:

IX. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՑԵԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱԿԱՆ ԹՈՒՑԵԿՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԻ ԿԱՐԳԸ

31. Շինարարության թույլտվությունը փաստաթույթ է, որը հաստատում է կառուցապատողի՝ ինչպես նոր կառուցապատվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում որևէ շինարարական գործունեություն իրականացնելու իրավունքը:

32. Քանդման թույլտվությունը փաստաթույթ է, որը հաստատում է սեփականատիրոց շենքերն ու շինությունները քանդելու իրավունքը:

33. Առանց շինարարության թույլտվության կարող են կատարվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ցածր ոիսկայնության աստիճանի (լ կատեգորիայի) դասակարգում ունեցող օրյեկտները (շինարարական աշխատանքները) եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործմանը և (կամ) չեն հակասում սահմանված սերվիսություններին:

34. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և գուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես նախագծով որոշված տարածքի սահմաններում:

35. Շինարարության (քանդման) թույլտվությունը Գեղաշեն համայնքում տայիս է համայնքի ղեկավարը «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» թիվ 91 որոշմամբ սահմանված կարգով:

36. Շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրած մարմնի կողմից ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթույթուր Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով համաձայնեցնելուց և կառուցապատողի կողմից դրանք հաստատելուց հետո՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «Ճ» կետով նախատեսված ժամկետով:

37. Շինարարության տևողությունը կարող է երկարածվել օրենքով սահմանված կարգով:

38. Շինարարության թույլտվությունը տրվում է տվյալ օրյեկտի ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթույթի համաձայնեցման հետ միաժամանակ, իսկ նախագծային փաստաթույթուր համարվում են հաստատված, եթե կառուցապատողը դրանց հաստատման վերաբերյալ գրավոր առարկություն չի ներկայացնում համաձայնեցնող մարմնին:

39. Գեղաշեն համայնքում շինարարության (քանդման) թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը վճարվում է համայնքի բյուջե։

40. Թույլտվության տեսակներն են՝

1) Նոր կառուցվող օրյեկտների, շենքերի և շինությունների, շինարարական-մոնտաժային աշխատանքների կատարման թույլտվությունը,

2) գոյություն ունեցող օրյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման աշխատանքների կատարման թույլտվությունը,

3) գոյություն ունեցող օրյեկտների քանդման թույլտվությունը։

41. Կառուցապատողը շինարարության թույլտվությունը ստանալու համար քաղաքապետարան է ներկայացնում հետևյալ փաստաթույթը՝ 1) դիմում՝ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված ձև N 1), 2)օրյեկտի շինարարության համար՝ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթույթը, որտեղ նշվում են շինարարության տևողության ժամկետը, իսկ փուլերով մշակվող նախագծի դեպքում՝ միջանկյալ հաստատվող փուլի նախագծային փաստաթույթը։

42. Դիմումում նշվում են՝

1) օրյեկտի նշանակությունը (բնույթը) և հասցեն,

2) օրենքով սահմանված դեպքերում՝ օրյեկտի նախագծային փաստաթույթը մշակած և սահմանված

իրավատացման լիցենզիաների համարներով, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դժվագերով՝ նախագծային աշխատանքների կառավագության երաշխափրագիրը:

43. Շինարարության թույլտվության դիմում ներկայացնելիս կառուցապատողը կամ բանդան աշխատանքների իրականացնողը պարտավոր է ներկայացնել շինարարական առջը համապատասխան արքավայր տեղափոխմելու վերաբերյալ պայմանագիր:

44. Կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթյութերի պահանջներին համապատասխան:

45. Սեփականատերը կամ նրա կողմից սահմանված կարգով լիազորված անձը քանդման թույլտվություն ստանալու համար քաղաքապետարան է ներկայացնում հետևյալ փաստաթյութերը.

1) դիմում (Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված ձև N 2);

2) անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը և սեփականատիրոջ կողմից սահմանված կարգով տրված լիազորագիրը (եթե դիմումը ներկայացնում է լիազորված անձը):

46. Դիմումում նշվում են՝

1) քանդվող օբյեկտի նշանակությունը (բնույթը) և հասցեն,

2) քանդման նպատակը,

3) քանդվող օբյեկտի հիմնական ցուցանիշները:

47. Թույլտվություն տվող իրավասու մարմինը կառուցապատողի (սեփականատիրոջ) ներկայացրած փաստաթյութերը քննարկում է և ընդունում որոշում թույլտվության կամ մերժման մասին՝ դիմում տարու օրվանից ոչ ավելի, քան 5 օրվա ընթացքում:

48. Շինարարության և քանդման թույլտվությունները ձևակերպվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված ձևերի (N 3 և N 4 ձևեր):

49. Շինարարության թույլտվության հետ միասին կառուցապատողին է տրվում շինարարության վարման մատյան, որը դրոշմակենքում է թույլտվություն տվող իրավասու մարմինը:

50. Եթե նոր կառուցվող օբյեկտի շինարարության իրականացնում հարավոր չէ առանց գոյություն ունեցող օբյեկտի (օբյեկտների) քանդման, ապա սեփականատիրոջը տրված շինարարության թույլտվությունը՝ համապատասխան նշումով, հանդիսանում է նաև քանդման թույլտվություն:

51. Օբյեկտի փաստացի քանդումն ու նոր շինարարությունն իրականացվում են շինարարության թույլտվություն ստանալուց հետո՝ ճարտարապետակագծային առաջադրանքով սահմանված հերթականությամբ:

52. Այս դեպքում, եթե տեղանքի ճարտարագիտական ուսումնասիրություններն առանց քանդման անհնարին են, ապա քանդման թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ միաժամանակ՝ մինչև շինարարության թույլտվություն ստանալը. քանդման թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը համայնքի բյուջե վճարելուց հետո:

53. Եթե օբյեկտի քանդումը չի նախատեսում նոր օբյեկտի կառուցում, և (կամ) հաջորդ աշխատանքների իրականացման համար չի պահանջվում շինարարության թույլտվություն՝ ապա սեփականատիրոջը տրվում է քանդման թույլտվություն:

54. Համայնքի ղեկավարը տախս է թույլտվություն կամ այն մերժում է (գրավոր իրազեկելով մերժման հիմքերի մասին) դիմումն ստանալու օրվանից՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ոիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ոիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 10-օրյա ժամկետում:

55. Կրկնակի դիմելու և իրավասու մարմնի ներկայացրած պահանջները դիմուի կողմից կատարվելու դեպքում թույլտվության կամ մերժման մասին հարցը քննարկվում է ոչ ավելի, քան՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ոիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ եռօրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ոիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 7-օրյա ժամկետում:

56. Համայնքի ղեկավարի կողմէց շնչարաբոքած (քաղաքաց) թույլտվության տրամադրման կամ վարչական մասին կառուցապատող տեղեկացնում է դիմումով նշված էլեկտրոնային հասցեով և հեռախոսահամարով:

57. Թույլտվության ծևակերպման օրվանից 2 տարվա ընթացքում թույլտվությամբ նախատեսված աշխատանքները չափազանց պարզունակ կառուցապատող պարտավոր է դիմում թույլտվություն տվյալ իրավասու մարմնին՝ կառուցապատման տեխնիկական պայմանների հետապու փոփոխությունների մասին ցացոցի տվյալներ և տույն կարգի համաձայն նոր թույլտվություն ստանալու համար:

58. Կառուցապատողը շինարարական (քանդման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ տեղեկացնում է Գեղաշենի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված N 5 ձևի, եթե թույլտվությամբ այլ ժամկետ նախատեսված չէ:

59. Կառուցապատողը շինարարական ընթացքում պարտավոր է 5-օրյա ժամկետում տույն կարգի 80-րդ կետում նշված մարմիններին տեղեկացնել շինարարության թույլտվության և (կամ) N 5 ձևում նշված համապատասխան տեղեկանքի տվյալների փոփոխման մասին:

60. Նախագծային լուծումների՝ սահմանված կարգով փոփոխման դեպքում շինարարության թույլտվության մեջ կատարվում է գրառում:

X. ԳԵՂԱԶԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

61. Գեղաշեն համայնքում շինարարության ավարտը փաստագրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» թիվ 626-Ն որոշմամբ սահմանված կարգով, նոյն որոշմամբ հաստատված ձևի շինարարության շահագործման ակտի ձևակերպմամբ, նախագծով նախատեսված շինարարական և մուտաժային աշխատանքների իրականացումից հետո:

62. Ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու նպատակով կառուցապատողը դիմում է համայնքի ղեկավարին՝ շահագործման ակտի ձևակերպման համար:

63. Դիմումին կցվում են՝

- 1) ընդունող հանձնաժողովի ակտը կամ երկկողմանի ակտը.
- 2) երկկողմանի ակտի դեպքում՝ տարածքային բաժնի, շահագրգիռ պետական մարմինների և շահագործող կազմակերպությունների դրական եղակացությունները.
- 3) կատարողական փաստաթյութերի ցանկը.
- 4) ակտի ձևակերպման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վճարի մուծումը հավաստող անդորրագիրը:

64. Համայնքի ղեկավարը ներկայացված փաստաթյութերի հիման վրա ձևակերպում է շահագործման ակտը՝ դիմումն ստանալու օրվանից՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ոիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օրյեկտների համար՝ եռօրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ոիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օրյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում:

65. Կառուցապատողի ցանկությամբ ավարտական ակտը կարող է ձևակերպվել առանց նախագծով նախատեսված այնպիսի աշխատանքների իրականացման, որոնց համար ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ հաստատված կարգի չի պահանջվում շինարարության թույլտվություն:

66. Ինքնակամ կառուցված կամ նախագծային, շինարարական նորմերի և կանոնների եւկան խախտումներով կառուցված շենքերի և շինությունների շինարարության ավարտը ենթակա չէ փաստագրման:

67. Դիմումի մերժման դեպքում իրավասու մարմինը տույն կարգի 86-րդ կետով սահմանված ժամկետներում գրավոր տեղեկացնում է դիմումին՝ նշելով մերժման պատճառները, ընդ որում, մերժումը կարող է պատճառարանվել միմիայն տույն կարգի 85-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

68. Իրավասու մարմնի առաջարկած պահանջները բավարարվելու դեպքում շահագործման ակտը ձևակերպվում է կառուցապատողի կրկնակի դիմումը տալու օրվանից եռօրյա ժամկետում:

69. Ծահագրենման ակտը կազմվում է 4 օրինակից, որոնցից մեկը մտում է քաղաքապետարանու, մասնակին օրինակ տրվում է կառուցապատույթին, կապալսութին և Հայաստանի Հանրապետության կառավարության առջևին անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքներին մարմնին:

XI. ՔԱՂԱՔԱԾԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՐ ՀԱԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

70. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը վերահսկում է համայնքի վարչական տարածքում կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը՝ կիրառելով վարչական պատասխանատվության միջոցներ:

71. Վարչական իրավախսային վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 2191 հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը քննում է շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու վերաբերյալ, շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելու վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում կառուցապատումը չափարտելու վերաբերյալ գործերը:

XII. ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԾԻՆԱԿԱՆ ԿԱՂԱՍՏՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԾԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՈԽԱՇՈՐԻՒՆԳԸ

72. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի ղեկտեմբերի 31-ի «Պետական քաղաքաշինական կադաստրի վարման և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 802 որոշմամբ սահմանված կարգով և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների պահպանմամբ պետական քաղաքաշինական կադաստրի վարումը և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգը Գեղաշեն համայնքում կատարում է համայնքի ղեկավարը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԶԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

11 ՄԱՐՏԻ 2016թվականի N 10-Ն

ԳԵՂԱԶԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 60-Ն ՕՐՈՇՄԱՆ ՄԵջ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, համայնքի ավագանին որոշում է.

1. Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի 2016թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» 60-Ն օրոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1/Հավելվածի հատված 2-ի 2100 տողի 6-րդ սյունակի «36240.0» թիվը փոխարինել «43240.0» և 8-րդ սյունակի «340.0» թիվը փոխարինել «7340.0»թվով;
- 2/Հավելվածի հատված 2-ի 2110 տողի 6-րդ սյունակի «35830.0» թիվը փոխարինել «42830.0» և 8-րդ սյունակի «340.0» թիվը փոխարինել «7340.0»թվով;
- 3/Հավելվածի հատված 2-ի 2111 տողի 6-րդ սյունակի «35830.0» թիվը փոխարինել «42830.0» և 8-րդ սյունակի «340.0» թիվը փոխարինել «7340.0»թվով;
- 4/Հավելվածի հատվածի 2-ի 2400 տողի 6-րդ սյունակի «8838.4» թիվը փոխարինել «3838.4» և 8-րդ սյունակի «6158.4» թիվը փոխարինել «1158.4» թվով;
- 5/Հավելվածի հատված 2-ի 2450 6-րդ սյունակի «7558.4» թիվը փոխարինել «2558.4» և 8-րդ սյունակի «6158.4» թիվը փոխարինել «1158.4»թվով;
- 6/Հավելվածի հատված 2-ի 2451 6-րդ սյունակի «7558.4» թիվը փոխարինել «2558.4» և 8-րդ սյունակի «6158.4» թիվը փոխարինել «1158.4»թվով;
- 7/Հավելվածի հատված 2-ի 2600 6-րդ սյունակի «9680.0» թիվը փոխարինել «7680.0» և 8-րդ սյունակի «4200.0» թիվը փոխարինել «2200.0»թվով;
- 8/Հավելվածի հատված 2-ի 2640 6-րդ սյունակի «8200.0» թիվը փոխարինել «6200.0» և 8-րդ սյունակի «4200.0» թիվը փոխարինել «2200.0»թվով;
- 9/Հավելվածի հատված 2-ի 2641 6-րդ սյունակի «8200.0» թիվը փոխարինել «6200.0» և 8-րդ

սյունակի «4200.0» թիվը փոխարինել «2200.0»թվով:

10/Հավելվածի հատված 3-ի 5112 տողի 5112 հոդվածի 4-րդ և 6-րդ սյունակների «4200.0» թիվը փոխարինել «2200.0» թվով:

11/Հավելվածի հատված 3-ի 5113 տողի 5113 հոդվածի 4-րդ և 6-րդ սյունակների «5437.5» թիվը փոխարինել «437.5» թվով:

12/Հավելվածի հատված 3-ի 5123 տողի 5129 հոդվածի 4-րդ և 6-րդ սյունակների «0» թիվը փոխարինել «7000.0» թվով:

13/Հավելվածի հատված 6-ի 2100 տողի 7-րդ սյունակի «36240.0» թիվը փոխարինել «43240.0» և 9-րդ սյունակի «340.0» թիվը փոխարինել «7340.0»թվով, 2110 տողի 7-րդ սյունակի «35830.0» թիվը փոխարինել «42830.0» և 9-րդ սյունակի «340.0» թիվը փոխարինել «7340.0»թվով, 2111 տողի 5129 հոդվածի 7-րդ և 9-րդ սյունակների «0.0» թիվը փոխարինել «7000.0» թվով:

14/Հավելվածի հատված 6-ի 2400 տողի 7-րդ սյունակի «8838.4» թիվը փոխարինել «3838.4» և 9-րդ սյունակի «6158.4» թիվը փոխարինել «1158.4»թվով, 2450 տողի 7-րդ սյունակի «7558.4» թիվը փոխարինել «2558.4» և 9-րդ սյունակի «6158.4» թիվը փոխարինել «1158.4»թվով,

2451 տողի 5113 հոդվածի 7-րդ և 9-րդ սյունակների «5437.5» թիվը փոխարինել «437.5» թվով:

15/Հավելվածի հատված 6-ի 2600 տողի 7-րդ սյունակի «9680.0» թիվը փոխարինել «7680.0» և 9-րդ սյունակի «4200.0» թիվը փոխարինել «2200.0»թվով, 2640 տողի 7-րդ սյունակի «8200.0» թիվը փոխարինել «6200.0» և 9-րդ սյունակի «4200.0» թիվը փոխարինել «2200.0»թվով, 2641 տողի 5112 հոդվածի 7-րդ և 9-րդ սյունակների «4200.0» թիվը փոխարինել «2200.0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. Արցւասլան Լևոն

2. Բարսեղ Արթոր

3. Բարսեղ Նաիր

4. Գրիգոր Արմա

5. Ղազար Աշոտան

6. Խաչատրյան ՍՄՐԱՏ

7. Հակոբ Հակոբ

8. Հարությունյան Աշոտ

9. Հովհաննես Հակոբ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵԿԱԿԱՐ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԶԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

11 ՄԱՐՏԻ 2016թվականի N 11-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի N13 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետերով, համայնքի ավագանին որոշում է.

- Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի ավագանու 2010թվականի ապրիլի 9-ի ««Մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին» N13 որոշմամբ հաստատված հավելվածը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում փոփոխությունը պետական ռեգիստրում գրանցվելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -9

1. ԱՐՐԱՎԱՅՐԱՆ ԼՅՈՎԱ

Դեմ -0

Ձեռնպահ -0

2. ԲԱՐԱՅԱՆ ԱՐԹՈՒՐ

3. ԲԱՐԱՅԱՆ ՆԱԻՐԱ

4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՄ

5. ՂԱՎԱՅՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

6. ԽԱՐԱՏՐՅԱՆ ՍՄՐԱՏ

7. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

8. ՀՐՈՒՆՔԵՂԻՆՅԱՆ ԱՌԱՎՐ

9. ՀՈՎՀԱԿԱՆԻՍՅԱՆ ՀԱՅՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱԿԱՆԻՍՅԱՆ

Հավելված

Գեղաշեն զյուղական համայնքի ավագանու

2010 թվականի օպերող Զ հ Ա 13 որոշման

Օրորիսված

Գեղաշեն համայնքի ավագանու

2016թվականի մարտի 11-ի N11-Ա



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԳԵՂԱՇԵՆ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ

1. ԸՆԴԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գեղաշենի <<Մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետև՝ հաստատություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, մշակութային գործունեություն և կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող համայնքային ոչ առևտրային հաստատություն է:

Գեղաշենի <<Մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է Գեղաշեն համայնքի, <<Մշակույթի տուն>> բյուջետային հիմնարկի իրավահաջորդը (գրանցված):

2. Հաստատության հիմնադիրն է Գեղաշենի համայնքապետարանը՝ հանձինս Գեղաշենի համայնքի ղեկավարի:
3. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության <<Տեղական խնդիրակառավարման մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքներով և սույն կանոնադրությամբ:
4. Հաստատության հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 2-րդ փողոց, թիվ 13, փոստային դասիչը 2217:
5. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
6. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք և դրոշմակնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
7. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

8. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադիրի որոշմամբ:
9. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա մշակութային հաստատությունների կամ կազմակերպությունների հետ:
10. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:
11. Հաստատության անվանումն է՝
հայերեն՝ Գեղաշենի Հայակույթի տուն՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան և նպատակը.
ա) ազգարնակշության մշակութային պահանջմունքների առավել լիարժեք բավարարումը
բ) հանրությանը մշակութային ժառանգությանը հաղորդակցվելու ապահովումը:
13. Հաստատությունում այդ նպատակներին համապատասխան.
ա) կազմակերպվում է տարբեր բնույթի մշակութային միջոցառումներ, ցուցահանդեսներ, կինոցուցադրումներ
բ) կազմակերպվում է արվեստի գործիչների և պատանի ստեղծագործների ցուցահանդեսներ, համերգային մրցույթ-փառատոններ և այլ մշակութային միջոցառումներ
գ) կազմակերպվում են սպորտային միջոցառումներ
14. Կազմավորված խմբակների միջոցով իրականացվում է պատանիների և երիտասարդների՝ պարարվեստի, երաժշտության, արհեստների, թատերական ներկայացումների ու համերգների կազմակերպման ուսուցումը, որոնց արդյունքով սաներին շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում է համապատասխան վեպայականներ:
15. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների գուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

16. Հաստատությունը պատասխանառու է Երեխաների կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:
17. Հաստատությունում սովորող Երեխաների թվակազմը որոշում է հիմնադիրը:
18. Հաստատության մանկավարժական անձնակազմը պարբերաբար ենթարկվում է քժշկական գննման:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒՄԸ

19. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը և նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ տնօրենը /այսուհետ տնօրեն/:
20. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
21. Հաստատության հիմնադիրի բացառիկ լիազորություններն են՝
 - ա) հաստատության գործունեության տեսակների և նպատակների, այդ թվում նրա կողմից ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը
 - բ) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և /կամ/ ամրացվող հանայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը
 - գ) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը
 - դ) հաստատության կառավարման համակարգի սահմանումը
 - ե) հաստատության վերակազմավորումը և լուծարումը
 - զ) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը
 - է) լուծարման հաշվեկշռի հաստատումը
22. Համայնքի դեկավարը՝
 - ա) նշանակում և ազատում է հաստատության տնօրենին, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորում և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը
 - բ) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ
 - զ) կատեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ ՀՀ օրենադրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները ու ցուցումները

դյասում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները

Ե) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանման նկատմամբ

զ)համայնքի ավագանու որոշմամբ հաստատության կանոնադրությամբ նախատեսման դեպքում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձման համար

Ե)հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները, տարեկան հաշվեկշիռը

ը)իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ

23.Տնօրենը իրականացնում է ընթացիկ գործունեության դեկավարում: Տնօրենն օրենքով , հանայնքի դեկավարի, ավագանու որոշմամբ, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում դեկավարում է հաստատության գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների , այլ իրավական ակտերի, համայնքի դեկավարի որոշումների սույն կանոնադրությամբ և կնքված պայմանագրի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

24.Տնօրենը

ա)առանց առանց լիազորագրի կարող է հանդես գալ հաստատության անունից, ներկայացնել նրա շահերը և կնքել գործարքներ

բ)սահմանում է հաստատության ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները

զ)ՀՀ օրենսդրությամբ համայնքի դեկավարի ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը՝ այդ թվում ֆինանսական միջոցները

դ)տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր՝ այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագիր

Ե) աշխատանքի նշանակում, աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր

զ)բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ

Ե) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը

Ը)իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար

Թ)ապահովում է ներքին աշխատանքային կարգապահություն, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը

Ժ)վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ

Ի) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներակայացնում կառավարման մարմինների հաստատմանը

Վ) չի կարող զբաղեցնել այլ պաշտոն, կամ կատարել վճարովի աշխատանք, բացի գիտամանկավարժական, ստեղծագործական աշխատանքից

Խ)լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը և պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չի պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար

Ճ)իրականցնում է ՀՀ օրենադրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ

Կ)պատասխանատու է հաստատության շենքի և գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, սանիտարահիգիենիկ և բարեկարգ վիճակի, ուսումնական պարապմունքների՝ դասասենյակների ժամանակին նախապատրաստման, հակարդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար

Հ)միջոցներ է ձեռնարկում հաստատության ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար

25. Տնօրենի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի զրավոր որոշման համաձայն նրա լիազորություններն իրականացնում է փոխարինողը:

26. Խմբակի ղեկավարը, խմբավարը, դասատուն, գեղարվեստական ղեկավարը

ա)ուսումնադաստիարակչական աշխատանք է կատարում աշակերտների հետ սերտորեն համագործակցելով մյուս դասատուների հետ

բյարականացնում է խմբակի համար սահմանված գործակարությունը, կազմակորպության տնօրինությանը ներկայացնում աշակերտների հաճախումների և վարքի մասին տեղեկություններ

զարգելվում են բոլոր այն նախաձեռնությունները, որոնք կարող են աշակերտների առողջության կամ կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել աշխատանքների, ծրագրերի, միջոցառումների իրականացմանը:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻԱՆՍԱՏՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

27. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ, հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, օգտագործման իրավունքով նրան ամրացվող, ինչպես նաև ձեռք բերված գույքից:

28. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

29. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

30. Հաստատության սեփականության պահպանման հոգար կրում է հաստատությունը:

31. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բոնագանձում՝ միայն դատական կարգով:

32. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

33. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, անհատույց օգտագործման հանձնել: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնել վարձակալության, եթե արգելված չէ հիմնադրի կամ ավագանու որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավել բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի

օգտագործման արդյուրնում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են հիմնադրի սեփականությունը: Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

34. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է ֆինանսական միջոցները:
35. Հաստատությանը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից, կատարվող հատկացումներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ այլ աղբյուրից: Այն է՝
- ա) կրթադաստիարակչական վճարովի ծառայությունների մատուցումից ստացվող միջոցներից
բ) բարեկործական, նպատակային, ներդրումներից, և և օտարերկրյա կազմակերպությունների ու բաղաքացիների նվիրատվություններից ու հանգանակություններից
գ) ՀՀ օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին շհակասող գործունեությունից ստացված միջոցներից
36. Հաստատության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել առողջական /վերստուգման/ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
37. Հաստատության շահույթը նպատակառուղղվում է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:
38. Հաստատությունը հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ վճարում է ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու շահով՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

39. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ օրենսդրության համաձայն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

11 ՄԱՐՏԻ 2016թվականի N 12-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՄԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, համայնքի ավագանին որոշում է.

- Համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշենի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներին հավելավճար սահամանելու մասին» N59-Ա որոշման վերնագրում և տեքստում «գյուղապետարանի» բառը փոխարինել «համայնքապետարանի» բառով:
- Համայնքի ավագանու 2014թվականի սեպտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» N 39 որոշման հավելվածում «գյուղապետարանի» բառը փոխարինել «համայնքապետարանի» բառով:
- Համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղապետարանի աշխատակազմի 2016թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին» N49-Ա որոշման վերնագրում, տեքստում և հավելվածներում «գյուղապետարանի» բառը փոխարինել «համայնքապետարանի» բառով:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9

Դեմ -0

Զետնպահ -0

- ԱՐԱՀԱՄԱՅԻՆ ԼՅՈՎԱ
- ԲԱՐԱՅԱՆ ԱՐՅՈՒՐ
- ԲԱՐԱՅԱՆ ՆԱԻՐԱ
- ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄՐԱ

5. ՌԱՎԵԱՆ ԱԼՂՐԻՄԻԿ *Անդրեյ*
6. ԽԱՉԱՏՐԵԱՆ ԱՄԲԱՏ *Դավիթ*
7. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ *Տիգրան*
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆԻ ԱՐՄԵՆԻ *Արմեն*
9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԻ *Հայկ*
- ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎՈՐ
- 

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ